ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Անուն, ազգանուն, զբաղեցրած պաշտոնը՝

Դիանա Քարազյան – ՀՀ վարչապետի աշխատակազմի Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակի ղեկավարի տեղակալ

Գործուղման վայրը և ժամկետները

Ֆրանսիայի Հանրապետություն (ք. Ստրասբուրգ), 2023թ. մայիսի 3-ից 5-ը ներառյալ

Հրավիրող կողմը

Եվրոպայի խորհուրդ (ԵԽ)

Գործուղման նպատակը

Գործուղման նպատակն է եղել Եվրոպայի խոհրդի Նախարարների կոմիտեի՝ Իսլանդիայի նախագահության շրջանակներում կազմակերպված «Սուբսիդիարության սկզբունք. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի ազգային իմպլեմենտացիա» խորագրով կոնֆերանսին (այսուհետ՝ Կոնֆերանս) մասնակցությունը և Կոնֆերանսի խորագրի շուրջ ՀՀ փորձի ներկայացումը:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Կոնֆերանսին (որը տեղի է ունեցել 2023 թվականի մայիսի 4-ին) մասնակցել են Եվրոպայի խորհրդի տարբեր կառույցների, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների ազգային ինստիտուտների բարձրաստիճան պաշտոնատար անձինք, ինչպես օրինակ Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների և իրավունքի գերակայության գլխավոր տնօրինության Մարդու իրավունքների տնօրեն Քրիստոֆ

Պուարելը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի գլխավոր քարտուղար Մարիալենա Ցիրլին, Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Գերմանիայի, Շվեյցարիայի ներկայացուցիչները և այլ պաշտոնատար անձինք: Կոնֆերանսի ընթացքում քննարկվել են Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիայի (Կոնվենցիա) ազգային մակարդակում իմպլեմենտացիայի առանձնահատկությունները և մեխանիզմները: Կոնֆերանսի մասնակիցները իրենց ելույթներում ընդգծել են նշված գործընթացում ազգային բարձրագույն դատարանների ցանցի դերի կարևորությունը որպես կոնվենցիոն չափանիշները ազգային մակարդակում ուղղակիորեն կիրառող մարմինների:

ՀՀ կառավարության կողմից Կոնֆերանսին առցանց տարբերակով իր մասնակցությունն է ունեցել ՀՀ վարչապետի աշխատակազմի Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակի ղեկավար Լիպարիտ Դրմեյանը, ով իր ելույթում ընդգծել է ՀՀ կառավարության կողմից Կոնվենցիայի լույսի ներքո ստանձնած պարտավորությունների, այդ պարտավորություններն ի կատար ածելու համար նախաձեռնվող միջոցառումների, ինչպես նաև ՀՀ և ԵԽ միջև համագործակցության կարևորությունը:

Կոնֆերանսին Ստրասբուրգում մասնակցել է Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակի ղեկավարի տեղակալ Դիանա Քարազյանը, ով իր ելույթում ներկայացրել է Մարդու իրավունքների եվրոական դատարանի վճիռների կատարմանն ուղղված ՀՀ կառավարության կողմից իրականացվող քայլերը: Մասնավորապես, Դ. Քարազյանը մանրամասն ներկայացրել է ՀՀ փորձը՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռները լավագույնս կատարելու նպատակով միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու վերաբերյալ: Դ. Քարազյանը ներկայացրել է նաև կոնվենցիոն պահանջները ներպետական մակարդակում ներդնելուն ուղղված հիմնական ծրագերը, որոնք իրականացվել են նախորդ մի քանի տարվա ընթացքում Եվրոպայի խորհրդի աջակցությամբ: Դ. Քարազյանը կոնվենցիոն երաշխիքների ապահովման շրջանակներում շեշտել է ՀՀ

դատավարական օրենսգրքերում ՀՀ կողմից իրականացված օրենսդրական փոփոխությունների մասին, որոնք հնարավորություն են տալիս ներպետական մակարդակում վերաբացել դատական գործերը հաշտության համաձայնությունը և միակողմանի հայտարարությունը ՄԻԵԴ-ի կողմից հաստատող որոշման հիման վրա: Դ. Քարազյանը որպես հաջող փորձ ներկայացրել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ ներկայացուցչի (ով ՀՀ կառավարության պարագայում միջազգային իրավական հարցերով ներկայացուցիչն է) կարգավիճակի օրենսդրական կարգավորումը:

Ստորագրություն, ամսաթիվ

08.05.2023